# ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1 «ԳՆՈՄՈՆ»

## ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ
ԵՎ ԱՅԴ ԱՄՍԱԹՎԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐԵԿԱՆ

# ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

PROGRESS AUDIT

ԵՐԵՎԱՆ 2022

# Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն


| | |
|---|---|
| Անկախ աուդիտորի եզրակացություն | էջ 3-5 |
| Հաշվետվություն ֆինանսական վիճակի մասին | էջ 6-7 |
| Հաշվետվություն համապարփակ ֆինանսական արդյունքների մասին | էջ 8 |
| Հաշվետվություն սեփական կապիտալում փոփոխությունների մասին | էջ 9 |
| Հաշվետվություն Դրամական միջոցների հոսքերի մասին | էջ 10 |
| Ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություններ | էջ 11 |

AUDIT & CONSULTING

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ և
ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ
ՀԳԳՀ # 1 20 0333

«ՊՐՈԳՐԵՍ-ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան 26/3

# Անկախ Աուդիտորի Եզրակացություն

Երևանի Ոսկերչական Գործարան-1 <Գնոմոն> ԲԲԸ
Բաժնետերերին

*Կարծիք*

Մեր կողմից իրականացվել է Երևանի Ոսկերչական Գործարան-1 <Գնոմոն> Բաց Բաժնետիրական Ընկերության (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, ընդ որում՝ այդ հաշվետվությունները ներառում են 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականությունը:

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով արժանահավատ են և տալիս են ճշմարիտ ու իրական պատկերը 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ֆինանսական վիճակի, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների, զուտ ակտիվներում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների Միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ):

*Կարծիքի հիմքեր*

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի (ՀՄԴ-ի Վարքագիրք) և Հայաստանի Հանրապետությունում կիրառելի՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, և մենք կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝ այդ պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

*Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար*

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք զերծ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:
Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, անընդհատ գործելուն առնչվող հարցերը բացահայտելու, ինչպես նաև գործունեության անընդհատության ենթադրության վրա հիմնված հաշվառում վարելու համար, քանի դեռ ղեկավարությունը չի նախատեսում լուծարել Ընկերությունը կամ դադարեցնել դրա գործունեությունը կամ չունի իրատեսական այլընտրանք, բացի նշվածները:
Կառավարման օղակներում ներգրավված անձինք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

*Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար*

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ երաշխիքներ՝ խարդախությունների կամ սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն, որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՍ համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցրած կարող են ազդել այդ ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝ դրանց հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:
ԱՄՍ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ, մենք՝

- Բացահայտում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի շրջանցում:

- Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ Ընկերության ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետևություն ենք անում, թե արդյոք առկա է իրադարձությունների կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել Ընկերության անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ: Եթե մենք գալիս ենք եզրահանգման, որ գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ եթե նման բացահայտումները պատշաճ կերպով ներկայացված չեն, մենք պետք է ձևափոխենք կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա իրադարձությունները կամ հանգամանքները կարող են հանգեցնել նրան, որ Ընկերությունը կորցնի իր անընդհատ գործելու կարողությունը:
- Գնահատում ենք ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը, և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները և արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հետ աուդիտի պլանավորած շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, որոնք ներառում են աուդիտի ընթացքում մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կարևոր թերությունները:

02 Մայիսի 2022թ.

Արթուր Կիրակոսյան
Գլխավոր տնօրեն

Ռուզաննա Արզումանյան
Խմբի ղեկավար-աուդիտոր

*ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ*
*Հաշվետվություն ֆինանսական վիճակի մասին*
*2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ*

*հազար դրամ*

| | | 31.12.2021թ. | 31.12.2020թ |
|---|---|---|---|
| **ԱԿՏԻՎՆԵՐ** | | | |
| **Ոչ ընթացիկ նյութական ակտիվներ** | | | |
| Հիմնական միջոցներ | 4 | 2,459,501 | 2,480,288 |
| Օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցներ | 5 | 32,740 | 32,740 |
| Ոչ նյութական ակտիվներ | 6 | 833 | 1,250 |
| Կանխավճար ոչ ընթացիկ ակտիվներ ձեռք բերելու համար | | - | - |
| **Ընդամենը ոչ ընթացիկ նյութական ակտիվներ** | | **2,493,074** | **2,514,278** |
| **Ընթացիկ ակտիվներ** | | | |
| Պաշարներ | 8 | 2,090,136 | 1,862,920 |
| Տրված ընթացիկ կանխավճարներ | 9 | 29,806 | 35,350 |
| Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր | 10 | 41,045 | 62,752 |
| Դրամական միջոցներ | 11 | 57,145 | 106,179 |
| Ընթացիկ ակտիվներ հարկերի և այլ վճ. գծով | | 612 | 363 |
| Փոխառություն | 12 | 24,312 | 24,312 |
| Այլ ընթացիկ ակտիվներ | 13 | 3,529 | 132 |
| **Ընդամենը ընթացիկ ակտիվներ** | | **2,246,585** | **2,092,008** |
| **Ընդամենը ակտիվներ** | | **4,739,659** | **4,606,286** |
| **Սեփական կապիտալ և պարտավորություններ** | | | |
| **Սեփական կապիտալ** | | | |
| Կանոնադրական կապիտալ | 14 | 1,095,340 | 1,095,340 |
| Կուտակված շահույթ | | 2,986,933 | 2,897,334 |
| Պահուստային կապիտալ | | 45,602 | 45,602 |
| **Ընդամենը սեփական կապիտալ** | | **4,127,875** | **4,038,276** |
| **Ոչ Ընթացիկ պարտավորություններ** | | | |
| Երկարաժամկետ բանկային վարկեր | 15 | - | |
| Հետաձգված հարկային պարտավորություն | 7 | 194,026 | 190,709 |
| **Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ** | | **194,026** | **190,709** |

| | | 31.12.2021թ. | 31.12.2020թ |
|---|---|---|---|
| **Ընթացիկ պարտավորություններ** | | | |
| Երկարաժամկետ բանկային վարկերի կարճաժ. մաս | 15 | - | |
| Կարճաժամկետ բանկային վարկեր (օվերդրաֆտ) | 15 | 105,676 | 84,670 |
| Ստացված ընթացիկ կանխավճարներ | 16 | 110,987 | 79,249 |
| Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր | 17 | 22,437 | 23,932 |
| Հարկերի և այլ պարտադիր վճարների գծով պարտավ. | 18 | 33,827 | 31,437 |
| Հաշվեգրած պարտավոր. աշխատավարձի և արձ. գծով | | 8,768 | 6,155 |
| Պարտքեր շահաբաժինների գծով | | 115,281 | 128,707 |
| Ընթացիկ պահուստներ | | 18,612 | 21,314 |
| Փոխառություն | | - | - |
| Այլ ընթացիկ պարտավորություններ | | 2,170 | 1,837 |
| **Ընդամենը ընթացիկ պարտավորություններ** | | **417,758** | **377,301** |
| **Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ** | | **4,739,659** | **4,606,286** |

Գլխավոր տնօրեն՝

Էմիլ Գրիգորյան

Գլխավոր հաշվապահ՝

Ազատուհի Մակարյան

02 Մայիսի 2022թ.

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 40-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

*ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ*

*Հաշվետվություն համապարփակ ֆինանսական արդյունքների մասին*

*2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ*

*հազար դրամ*

| | Ծանոթ. | 2021թ.-ի 12 ամիսներ | 2020թ.-ի 12 ամիսներ |
|---|---|---|---|
| Հասույթ | 19 | 1,081,563 | 613,300 |
| Վաճառքի ինքնարժեք | 20 | (806,826) | (452,998) |
| **Համախառն շահույթ** | | **274,737** | **160,302** |
| Այլ եկամուտներ | 21 | 183,804 | 41,012 |
| Իրացման ծախսեր | 22 | (104,233) | (55,626) |
| Վարչական ծախսեր | 23 | (83,653) | (57,727) |
| Այլ գործառնական ծախսեր | 24 | (166,738) | (46,328) |
| **Գործառնական գործունեությունից շահույթ (վնաս)** | | **103,917** | **41,633** |
| Ֆինանսական ծախս | 25 | (4,663) | (9,244) |
| Ֆինանսական եկամուտ | | - | - |
| Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից զուտ օգուտ (կորուստ) | 26 | 9,676 | (6,720) |
| Այլ եկամուտ (ծախս) | | - | - |
| Այլ ոչ գործառնական գործունեությունից շահույթ | 27 | (1,741) | (543) |
| **Շահույթ մինչև հարկումը** | | **107,189** | **25,126** |
| Շահութահարկի գծով եկամուտ (ծախս) | 28 | **(18,029)** | **(4,643)** |
| **ՏԱՐՎԱ ՇԱՀՈՒՅԹ** | | **89,160** | **20,483** |
| Այլ համապարփակ ֆինանսական արդյունք | | - | - |
| **ԸՆԴԱՄԵՆԸ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ** | | **89,160** | **20,483** |

Գլխավոր տնօրեն՝ Գլխավոր հաշվապահ՝

Էմիլ Գրիգորյան Ազատուհի Մակարյան

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 40-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

*ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ*

## *Հաշվետվություն սեփական կապիտալում փոփոխությունների մասին*

*2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ*

*հազ. դրամ*

| | Կանոնադրական կապիտալ | Չբաշխված շահույթ | Վերագնահատ. Տարբերությ. | Պահուստային կապիտալ | Ընդամենը Սեփական կապիտալ |
|---|---|---|---|---|---|
| Մնացորդը առ 01 հունվարի 2020թ | 1,095,340 | 2,876,851 | | 45,602 | 4,017,793 |
| Ճշգրտում | - | - | | - | - |
| *Մնացորդը առ 01 հունվարի 2020թ.* | 1,095,340 | 2,876,851 | | 45,602 | 4,017,793 |
| Հաշվետու տարվա շահույթ (վնաս) | - | 20,483 | | - | 20,483 |
| Շահաբաժինների բաշխում | - | - | | - | - |
| Ներքին տեղաշարժ | - | - | | - | - |
| *Մնացորդը 31 դեկտեմբերի 2020թ դրությամբ* | 1,095,340 | 2,897,334 | | 45,602 | 4,038,276 |
| | | | | | |
| *Մնացորդը առ 01 հունվարի 2021թ* | 1,095,340 | 2,897,334 | | 45,602 | 4,038,276 |
| Ճշգրտում | - | 439 | | - | 439 |
| *Մնացորդը առ 01 հունվարի 2021թ* | 1,095,340 | 2,897,773 | | 45,602 | 4,038,715 |
| Հաշվետու տարվա շահույթ (վնաս) | - | 89,160 | | - | 89,160 |
| Շահաբաժինների բաշխում | - | - | | - | - |
| Ներքին տեղաշարժ | - | - | | - | - |
| *Մնացորդը 31 դեկտեմբերի 2021թ . դրությամբ* | 1,095,340 | 2,986,933 | | 45,602 | 4,127,875 |

Գլխավոր տնօրեն՝

Էմիլ Գրիգորյան

Գլխավոր հաշվապահ՝

Ազատուհի Մակարյան

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 40-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

*ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ*

*Հաշվետվություն դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ*

*2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ*

| Գործառնական գործունեությունից հոսքեր | | 2021թ.-ի 12 ամիսներ | 2020թ.-ի 12 ամիսներ |
|---|---|---|---|
| Գործառնական գործունեության մատուցումից մուտքեր | | 1,130,490 | 787,197 |
| Այլ մուտքեր | | 351,969 | 49,226 |
| Վճարումներ մատակարարներին ապրանք և ծառայությունների համար | | (1,104,406) | (322,515) |
| Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից | | (154,510) | (125,771) |
| Շահութահարկի և այլ հարկերի վճարում | | (191,745) | (120,996) |
| Սոցիալական վճարների զծով | | - | - |
| Այլ ելքեր | | (75,209) | (41,339) |
| **Ընդամենը գործառնական գործունեությունից զուտ հոսքեր** | | **(43,411)** | **225,802** |
| **Ներդրումային գործունեությունից հոսքեր** | | | |
| Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վաճառքներից | | 350 | 1,000 |
| Ներդրումային գործունեությունից մուտքեր | | - | - |
| Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռք բերումից | | (16,574) | (6,542) |
| **Ընդամենը ներդրումային գործունեությունից զուտ հոսքեր** | | **(16,224)** | **(5,542)** |
| **Ֆինանսավորման գործունեությունից հոսքեր** | | | |
| Ստացված վարկերից և փոխառություններից | | 772,809 | 149,556 |
| Ֆինանսավորման այլ գործունեությունից մուտքեր | | 171 | 21 |
| Վարկերի և փոխառությունների մարումից | | (749,226) | (252,341) |
| Վճարված շահաբաժիններ և տոկոսներ | | (12,093) | (20,055) |
| Ֆինանսավորման այլ գործունեությունից ելքեր | | (930) | (280) |
| **Ընդամենը ֆինանսավորման գործունեությունից զուտ հոսքեր** | | **10,731** | **(123,099)** |
| **Ընդամենը զուտ հոսքեր** | | **(48,904)** | **97,161** |
| Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ | | (130) | 275 |
| **Դրամական միջոցների մնացորդը առ 1 հունվար** | | **106,179** | **8,743** |
| ***Դրամական միջոցների մնացորդը 31 դեկտեմբերի դրությամբ*** | | **57,145** | **106,179** |

Գլխավոր տնօրեն՝

Էմիլ Գրիգորյան

Գլխավոր հաշվապահ՝

Ազատուհի Մակարյան

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 11-ից մինչև 40-ող էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

## ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### 1. Ընդհանուր տեղեկություններ

«ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1» «ԳՆՈՄՈՆ» բաց բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն), անվանափոխությունը կատարվել է 27.07.2005թ-ին, գրանցման վկայական՝ 02 Ա 050339, հանդիսանում է «ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1» իրավահաջորդը: «ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1» ԲԲԸ-ն ստեղծվել է ՀՀ կառավարության 2000թ. դեկտեմբերի 31-ի թիվ 907 որոշման, ՀՀ Արդյունաբերության և առևտրի նախարարության 2001թ. Հունվարի 16-ի թիվ 9 հրամանի և <<Երևանի ոսկերչական գործարան>> ՓԲԸ բաժնետիրական ժողովի 2001թ. ապրիլի 2-ի որոշման համաձայն՝<<Երևանի ոսկերչական գործարան>> ՓԲԸ վերակազմակերպման՝ առանձնացման արդյունքում: Գրանցված է ՀՀ ձեռնարկությունների պետական ռեգիստրում, վկայական՝ 02 Ա 050339, Գրանցման համարը՝ 286.130.04189, 10.04.2001թ:
ՀՀ կառավարության 2000թ. դեկտեմբերի 31-ի թիվ 907 որոշման համաձայն «ԵՐԵՎԱՆԻ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ-1» ԲԲԸ-ն մասնավորեցվել է նոր բաժնետոմսերի թողարկման և դրանց փակ տեղաբաշխման միջոցով:

- Ընկերությունն ունի 1,095,340 հատ սովորական բաժնետոմս, 1,000 դրամ անվանական արժեքով: Բաժնետոմսերի ընդհանուր քանակի 75.89%-ը՝ 831,218 բաժնետոմսի սեփականատեր է համարվում «ԳՆՈՄՈՆ» ՍՊԸ-ն, 10.13 %-110,963 հատ բաժնետոմսերի սեփականատեր է համարվում Էմիլ Գրիգորյանը, 2.28%-25,000 հատ բաժնետոմսերի սեփականատեր է համարվում Սեդա Հակոբյանը, իսկ մնացած 11.7%- 128,159 հատ բաժնետոմսերը բաշխված է 1,454 բաժնետերերի միջև:

Ընկերության գործունեության հիմնական տեսակներն են՝

-պերճանքի առարկաների, ոսկերչական իրերի և թանկարժեք զարդեղենի, ժամացույցների, թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի արտադրություն և վաճառք,

- թանկարժեք մետաղների և քարերի առք ու վաճառք,

- օրենքով սահմանված, ադամանդների հավաստագրում,

- ոսկերչական արտադրության համար անհրաժեշտ նյութերի գործիքների, հանդերձանքի, սարքավորումների արտադրություն և վաճառք,

- տեխնոլոգիական հետազոտությունների և գիտատեխնիկական մշակումների կազմակերպում,

- թանկարժեք մետաղների զտում,

- և այլ օրենքով չարգելված գործառնություններ:

-թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման և հարգադրման գործունեություն, (լիցենզավորված գործունեություն՝ լիցենզիա N-ՀՀ 03, տրված 25.05.2007թ-ին ՀՀ Ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարության կողմից՝ անժամկետ)

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ 375023, ք.Երևան, Արշակունյաց պող. Թիվ-12:

Հարկ վճարողի հաշվառման համարը՝ 02556646:

Աշխատակիցների ցուցակային թվաքանակը 31.12.2021թ.՝ 109, (31.12.2020թ.՝ 100):

## 2. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և պատրաստման հիմունքները

*2.1 Համապատասխանությունը*

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին («ՖՀՄՍ») համապատասխան՝ ՀՀ կառավարության 11 մարտի 2010 թվականի «Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտները և միջազգային ստանդարտների ուղեցույցները հրապարակելու մասին» № 235-Ն որոշմամբ հրապարակված պաշտոնական, հայերեն նոր խմբագրությամբ:

Ընկերությունը պատրաստում և հրապարակում է նաև ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին («ՖՀՄՍ») համապատասխանող միջանկյալ ֆինանսական հաշվետվություն:

*2.2 Չափման հիմունքները*

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են չափման սկզբնական արժեքի հիմունքով:

*2.3 Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթը*

Հայաստանի Հանրապետության արժույթը ՀՀ դրամն է, որը Ընկերության ֆունկցիոնալ և ներկայացման արժույթն է: Ֆինանսական տեղեկատվությունում թվերը ներառվում են հազար դրամներով՝ առանց ստորակետից հետո տասնորդական նիշի:

*2.4 Ստորագրումը*

Սույն ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են 02 Մայիսի 2022թ.-ին գլխավոր տնօրեն Է. Գրիգորյանի և գլխավոր հաշվապահ Ա.Մակարյանի կողմից:

*2.5 Գնահատումների և դատողությունների օգտագործումը*

ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար անհրաժեշտ է, որ ղեկավարությունը կատարի դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդում են հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններում ներկայացվող ակտիվների, պարտավորությունների, եկամուտների և ծախսերի գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են այդ գնահատումներից տարբեր լինել:

Գնահատումներն ու դրանց հիմքում ընկած ենթադրությունները շարունակական հիմունքով վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումների արդյունքները ճանաչվում են վերանայման ժամանակաշրջանում և հետագա ժամանակաշրջաններում, որոնց վրա ազդում են:

2020 թվականի մարտին Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը COVID-19-ի բռնկումը հայտարարեց համաշխարհային համավարակ: Ի պատասխան համավարակի, Հայաստանի իշխանությունները COVID-19-ի տարածումն ու ազդեցությունը զսպելու նպատակով բազմաթիվ միջոցառումներ են իրականացրել, ինչպիսիք են ճանապարհորդության սահմանափակումները, կարանտինները, պատվաստումների պահանջները և բիզնեսի գործունեության սահմանափակումները: Ղեկավարության կողմից կատարված ընթացիկ գնահատումներն իրականացվել են հաշվի առնելով COVID-19 հետ կապված առանձնահատկությունները:

## 3. Հաշվապահական հաշվառման քաղաքականության վերաբերյալ էական տեղեկատվություն

### *3.1. Հիմնական միջոցներ*

*(a) Ճանաչումը և չափումը*

Հիմնական միջոցները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Սկզբնական արժեքը ներառում է ակտիվի ձեռքբերման և նպատակային նշանակության համար պատրաստի վիճակի բերելուն ուղղակիորեն վերագրելի ծախսումները: Սեփական ուժերով կառուցված ակտիվների սկզբնական արժեքը ներառում է նյութերի արժեքը, ուղղակի աշխատուժի գծով ծախսերը, ակտիվն իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված ցանկացած այլ ծախսումները, ակտիվի ապատեղակայման և քանդման ծախսերը, ինչպես նաև տեղանքի վերականգնման ծախսերը: Որակավորված ակտիվների ձեռք բերմանը կամ կառուցմանը վերաբերող փոխառության ծախսերը կապիտալացվում են որպես որակավորված ակտիվի սկզբնական արժեքի մաս:

Երբ որևէ հիմնական միջոցի մասերն ունեն տարբեր օգտակար ծառայություններ, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ (խոշոր բաղադրիչներ):

Հիմնական միջոցի միավորի օտարումից օգուտը կամ վնասը որոշվում է որպես օտարումից մուտքերի և օտարված հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի միջև տարբերություն, որը զուտ հիմունքով ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ ոչ գործառնական շահույթի կամ վնասի կազմում:

*(b) Հետագա ծախսումներ*

Հիմնական միջոցի առանձին մասերի փոխարինման ծախսումները ճանաչվում են այդ հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքում, եթե հավանական է, որ այդ մասի մեջ մարմնավորված ապագա տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն և դրա արժեքը կարող է արժանահավատորեն չափվել: Փոխարինված մասի (բաղադրիչի) հաշվեկշռային արժեքն ապաճանաչվում է: Հիմնական միջոցների առօրյա սպասարկման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում դրանց կատարման ժամանակ:

*(c) Մաշվածություն*

Մաշվածությունը հաշվարկվում է մաշվող գումարի նկատմամբ, որն իրենից ներկայացնում է ակտիվի սկզբնական արժեքը կամ դրան փոխարինող գումարը՝ հանած մնացորդային արժեքը:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում գծային մեթոդով՝ հիմնական միջոցների յուրաքանչյուր մասի համար գնահատված օգտակար ծառայությունների ընթացքում, քանի որ դա առավելագույնս է արտացոլում ակտիվներում մարմնավորված ապագա տնտեսական օգուտների սպառման ակնկալվող եղանակը:

Ընթացիկ և համադրելի ժամանակաշրջանների համար գնահատված օգտակար ծառայությունները ներկայացված են ստորև.

| | |
|---|---|
| Շենքեր | 50-80 տարի |
| Մեքենաներ և սարքավորումներ | 3-5 տարի |
| Այլ... | 3-10 տարի |
| Տրանսպորտային միջոցներ | 3-5 տարի |

| | |
|---|---|
| Համակարգչային տեխնիկա | 3 տարի |
| Տնտեսական և գրասենյակային գույք | 3-6 տարի: |

### 3.2. *Ոչ նյութական ակտիվներ*

Սկզբնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կուտակված կորուստը: Անորոշ օգտակար ծառայությամբ ոչ նյութական ակտիվները չեն ամորտիզացվում:

Ընթացիկ և համադրելի ժամանակաշրջանների համար գնահատված օգտակար ծառայությունները ներկայացված են ստորև.

| | |
|---|---|
| Համակարգչային հաշվապահական ծրագիր | 5 տարի |
| Այլ ծրագիր | 5 տարի |
| լիցենզիաներ | 3-10 տարի |

Այլ ոչ նյութական ակտիվներ՝ իրավունքների պայմանագրային ժամկետներով (սովորաբար՝ 1 տարի՝ վճարի դիմաց ամենամյա երկարացմամբ):

### 3.3. *Պաշարներ*

Պաշարներ. այն ակտիվներն են, որոնք՝

ա) պահվում են սովորական գործունեության ընթացքում վաճառքի համար.

բ) արտադրության ընթացքում են նման վաճառքի համար.

գ) հումքի կամ նյութերի ձևով են՝ արտադրանքի թողարկման կամ ծառայություններ մատուցման ընթացքում օգտագործելու համար:

Պաշարները չափվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Պաշարների ինքնարժեքը ներառում է ձեռքբերման ծախսումները, մշակման ծախսումները և պաշարները ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված բոլոր այլ ծախսումները:

Կազմակերպության գործունեության արդյունքը՝ ոսկերչական արտադրանքը հաշվառվում է որպես պաշար՝ արտադրանք:

Պաշարների ձեռքբերման ծախսումները ներառում են ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, չփոխհատուցվող հարկերը, ինչպես նաև տրանսպորտային, բեռնման-բեռնաթափման և այլ ծախսումները, որոնք ուղղակիորեն կապված են ապրանքների, նյութերի և ծառայությունների ձեռքբերման հետ: Ձեռքբերման ծախսումները որոշելիս առևտրային զեղչերը, գների իջեցումները և նմանատիպ այլ ճշգրտումները հանվում են:

Մշակման ծախսումները ներառում են արտադրանքի մշակման հետ ուղղակիորեն կապված ծախսումները, ինչպիսիք են աշխատուժի գծով ուղղակի ծախսումները: Այն ներառում է նաև պատրաստի ար-

տադրանքի վրա պարբերաբար բաշխվող հաստատուն և փոփոխուն արտադրական վերադիր ծախսումները, որոնք կատարվում են նյութերը պատրաստի արտադրանք դարձնելու (մշակելու) ընթացքում: Հաստատուն արտադրական վերադիր ծախսումները արտադրության այնպիսի անուղղակի ծախսումներն են, որոնք համեմատաբար կայուն են՝ անկախ արտադրության ծավալից, օրինակ՝ արտադրական շենքերի և սարքավորումների մաշվածությունը, դրանց շահագործման և պահպանման ծախսումները, ինչպես նաև արտադրամասի կառավարման և վարչական ծախսումները: Փոփոխուն արտադրական վերադիր ծախսումները արտադրության այնպիսի անուղղակի ծախսումներն են, որոնք ուղղակիորեն կամ համարյա ուղղակիորեն փոփոխվում են արտադրության ծավալին համամասնորեն, ինչպես օրինակ՝ նյութերի և աշխատուժի գծով անուղղակի ծախսումները:

Հաստատուն արտադրական վերադիր ծախսումները մշակման ծախսումների վրա բաշխվում են՝ ելնելով արտադրական հզորությունների նորմալ մակարդակից: Հզորությունների նորմալ մակարդակը արտադրության սպասվելիք ծավալն է, որին նորմալ հանգամանքների դեպքում կարելի է հասնել միջինը մի քանի ժամանակաշրջանների կամ սեզոնների ընթացքում՝ հաշվի առնելով պլանավորված շահագործման արդյունքում հզորությունների կորուստը: Արտադրության փաստացի մակարդակը կարող է օգտագործվել, եթե այն մոտավորապես համապատասխանում է նորմալ մակարդակին: Յուրաքանչյուր միավոր արտադրանքի վրա բաշխվող հաստատուն արտադրական վերադիր ծախսումների գումարը չի ավելանում ցածր արտադրողականության կամ արտադրության պարապուրդի հետևանքով: Չբաշխված վերադիր ծախսումները ճանաչվում են որպես ծախս դրանց կատարման ժամանակաշրջանում: Արտադրության ծավալների անսովոր բարձր լինելու ժամանակաշրջաններում յուրաքանչյուր միավոր արտադրանքի վրա բաշխվող հաստատուն արտադրական վերադիր ծախսումների գումարը նվազեցվում է այնպես, որ պաշարները չչափվեն ինքնարժեքից բարձր: Փոփոխուն արտադրական վերադիր ծախսումները յուրաքանչյուր միավոր արտադրանքի վրա բաշխվում են արտադրական հզորությունների փաստացի օգտագործման հիման վրա:

Պաշարների ինքնարժեքի մեջ չեն ներառվում և դրանց կատարման ժամանակաշրջանում ծախս ճանաչվող ծախսումները՝

ա) գերնորմատիվային ծախսումները՝ կապված նյութերի, աշխատուժի և արտադրական այլ ծախսումների գերածախսի հետ.

բ) պահպանման ծախսումները, բացառությամբ եթե դրանք անհրաժեշտ են արտադրության գործընթացում՝ նախքան հաջորդ արտադրական փուլին անցնելը.

գ) վարչական վերադիր ծախսումները, որոնք կապված չեն պաշարները ներկա գտնվելու վայր հասցնելու կամ պատշաճ վիճակի բերելու հետ.

դ) վաճառքի ծախսումները:

Փոխադարձ փոխարինելի հանդիսացող պաշարների ինքնարժեքը որոշվում է՝ կիրառելով «Միջին կշռված արժեքի» բանաձևը:

### *3.4. Պետական շնորհներ*

Պետական շնորհները կազմակերպությանը ռեսուրսների փոխանցման տեսքով պետության (այսինքն՝ կառավարության, կառավարական գործակալությունների և նմանատիպ տեղական, ազգային կամ միջազգային մարմինների) կողմից տրամադրվող օգնություններն են՝ կազմակերպության գործառնական գործունեությանը վերաբերող որոշակի պայմաններին անցյալում կամ ապագայում համապատասխանության դիմաց:

Ակտիվներին վերաբերող շնորհները պետական շնորհներ են, որոնց հիմնական պայմանը երկարաժամկետ ակտիվների գնումը, կառուցումը կամ որևէ այլ կերպ ձեռք բերելն է: Երկրորդական պայմաններ նույնպես կարող են կցվել՝ սահմանափակելով ակտիվների տեսակը կամ վայրը կամ ժամանակաշրջանները, որոնց ընթացքում դրանք պետք է ձեռք բերվեն կամ պահվեն:

Պետական շնորհները, ներառյալ իրական արժեքով չափվող ոչ դրամային շնորհները, չեն ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավոր հավաստիացում, որ.

ա) կազմակերպությունը բավարարելու է դրանց կցված պայմանները. և

բ) շնորհները ստացվելու են:

Պետական շնորհները ճանաչվում են շահույթում կամ վնասում սիստեմատիկ հիմունքով այն ժամանակաշրջանների ընթացքում, երբ կազմակերպությունը որպես ծախս է ճանաչում դրանց համապատասխան ծախսումները, որոնց փոխհատուցման համար նախատեսված են շնորհները: Մաշվող (ամորտիզացվող) ակտիվներին վերաբերող շնորհները ճանաչվում են շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանների ընթացքում և այն համամասնություններով, որոնք համապատասխանում են այդ ակտիվների մաշվածության ծախսերի ճանաչմանը: Չմաշվող (չամորտիզացվող) ակտիվներին վերաբերող շնորհները ճանաչվում են շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջաններում, որոնց ընթացքում տեղի են ունեցել դրանց կցված պարտականությունների կատարման հետ կապված ծախսումները:

Պետական շնորհը, որը ստացման ենթակա է դառնում՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որի նպատակն է կազմակերպությանը տրամադրել անհետաձգելի ֆինանսական օգնություն՝ առանց դրա հետ կապված հետագա ծախսումների, ճանաչվում է շահույթում կամ վնասում այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ այն դառնում է ստացման ենթակա:

Ակտիվներին վերաբերող պետական շնորհները, ներառյալ իրական արժեքով հաշվառվող ոչ դրամային շնորհները, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում են՝ շնորհը գրանցելով որպես հետաձգված եկամուտ՝ պարտավորությունների կազմում: Եկամուտներին վերաբերող ճանաչված շնորհները նույնպես, մինչև դրանց եկամուտ ճանաչելը համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում են որպես հետաձգված եկամուտ՝ պարտավորությունների կազմում:

Երբ փոխառությունները տրամադրվում են կառավարության կամ պետական կամ միջազգային այլ կազմակերպությունների կողմից անտոկոս կամ շուկայականից ցածր տոկոսադրույքով, դրա ազդեցությունը (այսինքն՝ ստացված փոխառության անվանական գումարի և «Ֆինանսական գործիքներ. Ճանաչումը և չափումը» ՀՀՍՍ 39-ի համապատասխան այդ փոխառության սկզբնական չափման գումարի միջև տարբերությունը) ներկայացվում է որպես պետական շնորհ:

### *3.5. <u>Ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ</u>*

#### *3.5.1. Սկզբնական ճանաչումը և չափումը*

Կազմակերպությունը ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է այն և միայն այն դեպքում, երբ նա դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Սկզբնական ճանաչման պահին «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը չափվում է իր իրական արժեքով, իսկ մնացած բոլոր ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները՝ իրական արժեքով՝

գումարած տվյալ ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը ուղղակիորեն վերագրելի գործարքի հետ կապված ծախսումները:

Նախորդ կետի համաձայն՝ սկզբնական ճանաչման պահին անտոկոս կամ շուկայականից ցածր տոկոսով տրամադրած կամ ստացած փոխառությունները, երկարաժամկետ դեբիտորական կամ կրեդիտորական պարտքերը չափվում են ոչ թե անվանական արժեքով, ոչ թե այդ պահին տրված կամ ստացված հատուցման չափով, այլ իրական արժեքով, որը որոշվում է դրանց գծով պայմանագրային ապագա դրամական հոսքերը զեղչելով՝ կիրառելով համապատասխան ժամկետայնության և ռիսկայնության գործիքների համար գերակշռող շուկայական տոկոսադրույքները:

Նախորդ կետի համաձայն սկզբնական չափման համար որոշված իրական արժեքի և տրված կամ ստացված հատուցման միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ, երբ դա՝

ա) պետական շնորհի մաս է կազմում, որի դեպքում կիրառվում են ՀՀՍՍ 20-ով սահմանված մոտեցումները,

բ) Կազմակերպության սեփականատերերի հետ գործարքի (որոնցում նրանք գործում են որպես սեփականատեր իրենց կարգավիճակով) արդյունք է, որի դեպքում այդ տարբերությունը ճանաչվում է սեփական կապիտալում:

*3.5.2. Ապաճանաչումը*

Կազմակերպությունը ապաճանաչում է ֆինանսական ակտիվը այն և միայն այն դեպքում, երբ՝

ա) ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը (լրանում է ուժի մեջ լինելու ժամկետը). կամ

բ) այն փոխանցում է ֆինանսական ակտիվը, և փոխանցումը ստորև շարադրվածին համապատասխան որակվում է որպես ապաճանաչման պայմանները բավարարող:

Կազմակերպությունը փոխանցում է ֆինանսական ակտիվը այն և միայն այն դեպքում, երբ այն՝

ա) փոխանցում է ֆինանսական ակտիվից դրամական միջոցների հոսքերի ստացման պայմանագրային իրավունքները. կամ

բ) պահպանում է ֆինանսական ակտիվից դրամական միջոցների հոսքերի ստացման պայմանագրային իրավունքները, սակայն ստանձնում է այդ դրամական միջոցների հոսքերը մեկ կամ ավելի ստացողների (վերջնական ստացողներ) վճարելու պայմանագրային պարտականություն՝ ըստ համաձայնության, որը համապատասխանում է հետևյալ երեք պայմաններին.

բ1) կազմակերպությունը պարտականություն չունի գումարներ վճարելու վերջնական ստացողներին, եթե այն չի հավաքագրում համարժեք գումարներ սկզբնական ակտիվից: Կազմակերպության կողմից մայր գումարի և շուկայական տոկոսադրույքով հաշվեգրված տոկոսի ամբողջությամբ հետ ստանալու իրավունքով տրված կարճաժամկետ կանխավճարները չեն խախտում այս պայմանը.

բ2) փոխանցման պայմանագրի պայմաններով՝ կազմակերպությանը արգելվում է վաճառել կամ գրավադրել սկզբնական ակտիվը, բացառությամբ վերջնական ստացողների մոտ գրավադրման՝ որպես դրամական միջոցների հոսքերը նրանց վճարելու պարտականության դիմաց ապահովում.

բ3) կազմակերպությունը պարտականություն ունի վերջնական ստացողների անունից՝ առանց էական ուշացման փոխանցել իր կողմից հավաքագրված ցանկացած դրամական միջոցների հոսքեր: Ի լրումն՝ կազմակերպությունն այդպիսի դրամական միջոցների հոսքերը վերաներդնելու իրավունք չունի,

բացառությամբ դրամական միջոցներում և դրանց համարժեքներում ներդրումների, որոնք կատարվում են վերջնահաշվարկի այն կարճ ժամանակահատվածի ընթացքում, որը ընկնում է հավաքագրման ամսաթվի և վերջնական ստացողներին պահանջվող փոխանցման ամսաթվի միջև, և երբ նման ներդրումներից վաստակած տոկոսները փոխանցվում են վերջնական ստացողներին:

Կազմակերպությունը ապաճանաչում է փոխանցված ֆինանսական ակտիվը, եթե՝

ա) փոխանցվել են նաև ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ

բ) ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները ոչ փոխանցվել, ոչ էլ պահպանվել են, սակայն Կազմակերպությունը չի պահպանել ֆինանսական ակտիվի նկատմամբ վերահսկողությունը:

Փոխանցման ընթացքում առաջացած կամ պահպանված որևէ իրավունք և պարտականությունն ճանաչվում է առանձին որպես ակտիվ կամ պարտավորություն:

Եթե կազմակերպությունը ոչ փոխանցում է, ոչ էլ պահպանում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները, սակայն պահպանել է ֆինանսական ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ապա այն շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը՝ դրանում իր շարունակվող ներգրավվածության չափով:

Ֆինանսական պարտավորությունը (կամ ֆինանսական պարտավորության մի մասը) ապաճանաչվում է այն և միայն այն դեպքում, երբ այն մարվում է, այսինքն՝ երբ պայմանագրում նշված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում, կամ ուժի մեջ լինելու ժամկետը լրանում է:

Գոյություն ունեցող փոխառուի և փոխատուի միջև նշանակալիորեն տարբերվող պայմաններով պարտքային գործիքների փոխանակումը պետք է հաշվառվի որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր ֆինանսական պարտավորության ճանաչում: Նմանապես, գոյություն ունեցող ֆինանսական պարտավորության կամ դրա մի մասի պայմանների նշանակալի վերափոխումը (անկախ այն բանից, արդյոք այն վերագրելի է փոխառուի ֆինանսական դժվարություններին) պետք է հաշվառվի որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր ֆինանսական պարտավորության ճանաչում:

Մարված կամ այլ կողմի փոխանցված ֆինանսական պարտավորության (կամ ֆինանսական պարտավորության մի մասի) հաշվեկշռային արժեքի և վճարված հատուցման (ներառյալ փոխանցված ցանկացած ոչ դրամական ակտիվները կամ ստանձնած պարտավորությունները) միջև տարբերությունը պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում:

*3.5.3. Հետագա չափումը*

Սկզբնական ճանաչումից հետո այլ կազմակերպությունների բաժնային գործիքներում (բաժնետոմսերում) ներդրումները, որոնք Կազմակերպությանը այդ կազմակերպությունների նկատմամբ տալիս են նշանակալի ազդեցության, վերահսկողության կամ համատեղ վերահսկողություն, Կազմակերպության առանձին ֆինանսական հաշետվություններում չափվում են ինքնարժեքով (սկզբնական արժեքով): Նման իրավունք (ազդեցություն) չապահովող ներդրումները բաժնային գործիքներում, ներառյալ՝ այդպիսի գործիքների հետ կապված ածանցյալները, չափվում են իրական արժեքով, բացառությամբ այն գործիքների, որոնք գործող շուկայում չունեն գնանշված շուկայական գին, և որոնց իրական արժեքը չի կարող արժանահավատորեն չափվել: Այդպիսիք չափվում են սկզբնական արժեքով:

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները, տրամադրած և ստացած փոխառությունները, դեբիտորական և կրեդիտորական պարտքերը չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

«Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներն ու ֆինանսական պարտավորությունները, ինչպես նաև վաճառքի համար մատչելի (ՎՀՄ) ֆինանսական ակտիվները (բացառությամբ բաժնային գործիքների, որոնք գործող շուկայում չունեն գնանշված շուկայական գին, և որոնց իրական արժեքը չի կարող արժանահավատորեն չափվել, ինչպես նաև այդպիսի բաժնային գործիքների հետ կապված ածանցյալ գործիքներ) սկզբնական ճանաչումից հետո չափվում են իրական արժեքով: Իրական արժեքի փոփոխություններից օգուտը կամ կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ ստորև նշվածի:

ՎՀՄ ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխություններից օգուտը կամ կորուստը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, բացառությամբ այդ փոփոխության մեջ հեջավորված ռիսկին վերագրվող մասի, փոխարժեքային տարբերությունների, արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսի և բաժնային գործիքների գծով հայտարարված շահաբաժինների, որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում: ՎՀՄ ֆինանսական ակտիվի ապաճանաչման կամ արժեզրկման ժամանակ, նախկինում այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված և սեփական կապիտալում կուտակված օգուտները կամ կորուստները որպես վերադասակարգման ճշգրտում հանվում են սեփական կապիտալից և ճանաչվում շահույթում կամ վնասում:

<u>Արժեզրկում</u>

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում Կազմակերպությունը գնահատում է, թե արդյոք առկա է որևէ անկողմնակալ վկայություն, որ ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբը արժեզրկված է: Եթե գոյություն ունի որևէ նման վկայություն, ապա կազմակերպությունը պետք է որոշի արժեզրկումից կորստի գումարը:

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական ակտիվների խմբի արժեզրկման անկողմնակալ վկայությունը ներառում է ակտիվի տիրապետողին հայտնի դարձած դիտարկելի տվյալները կորստի հետևյալ դեպքերի վերաբերյալ՝

ա) թողարկողի կամ փոխառուի նշանակալի ֆինանսական դժվարությունները.

բ) պայմանագրի խախտումը, օրինակ՝ տոկոսների կամ հիմնական գումարի չվճարումը կամ վճարման ուշացումը.

գ) փոխառուի ֆինանսական դժվարությունների հետ կապված տնտեսական կամ իրավական պատճառներով, փոխատուի կողմից փոխառուին զիջումների տրամադրումը, որը փոխատուն այլապես չէր նախատեսի.

դ) փոխառուի հավանական սնանկացումը կամ այլ ֆինանսական վերակազմավորում.

ե) ֆինանսական դժվարությունների հետևանքով այդ ֆինանսական ակտիվի համար գործող շուկայի վերացումը. կամ

զ) դիտարկելի տվյալներ՝ այն մասին վկայող, որ ֆինանսական ակտիվների խմբի գծով, դրանց սկզբնական ճանաչումից հետո, առկա է գնահատված ապագա դրամական միջոցների հոսքերի չափելի նվազում, թեև դեռևս հնարավոր չէ որոշել այդ նվազումը խմբի առանձին ֆինանսական ակտիվների գծով, ներառյալ՝

q1)խմբում փոխառուների վճարումների կարգավիճակի բացասական փոփոխությունները (օրինակ՝ վճարումների ուշացումների թվի ավելացումը կամ վարկային քարտերով փոխառուների թվի ավելացումը, որոնք հասել են իրենց պարտքային սահմանաչափին և կատարում են նվազագույն ամսական վճարում). կամ

q2) ազգային կամ տեղական տնտեսական պայմանները, որոնք կոռելիացիայի մեջ են խմբի ակտիվների գծով ձախողումների հետ (օրինակ՝ փոխառուների աշխարհագրական շրջանում գործազրկության մակարդակի աճը, համապատասխան շրջանում հիպոտեկային անշարժ գույքի գների նվազումը, նավթի գնի նվազումը նավթարտադրողներին տրամադրած փոխառության գծով ակտիվների դեպքում, կամ արդյունաբերության ճյուղի պայմանների բացասական փոփոխությունները, որոնք ազդում են խմբի փոխառուների վրա):

Գործող շուկայի վերանալն այն պատճառով, որ կազմակերպության ֆինանսական գործիքները այլևս չեն շրջանառվում բաց շուկայում, դեռևս արժեզրկման վկայություն չէ: Կազմակերպության պարտքային վարկանիշի իջեցումը, որպես այդպիսին, արժեզրկման վկայություն չէ՝ չնայած այն կարող է հանդիսանալ արժեզրկման վկայություն՝ դիտարկվելով այլ առկա տեղեկատվության հետ մեկտեղ: Ֆինանսական ակտիվի իրական արժեքի նվազումը իր սկզբնական արժեքից կամ ամորտիզացված արժեքից ցածր պարտադիր չէ, որ հանդիսանա արժեզրկման վկայություն (օրինակ՝ պարտքային գործիքում ներդրման իրական արժեքի նվազումը, որն անռիսկ տոկոսադրույքի աճի արդյունք է):

Արժեզրկման անկողմնակալ վկայության առկայության դեպքում արժեզրկումից կորստի գումարը չափվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և գնահատված ապագա դրամական միջոցների հոսքերի ներկա արժեքի միջև տարբերություն (բացառելով ապագա պարտքային վնասները, որոնք դեռևս տեղի չեն ունեցել)՝ զեղչված ֆինանսական ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով (այսինքն՝ սկզբնական ճանաչման ժամանակ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքով): Սկզբնական արդյունավետ տոկոսադրույք չունեցող գործիքների դեպքում զեղչումն իրականացվում է համանման ֆինանսական ակտիվի համար ընթացիկ շուկայական հատույցադրույքով: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ նվազեցնելով ակտիվի հաշվեկշռային արժեքը՝ օգտագործելով կարգավորող հաշիվ:

*3.6. <u>Հասույթ</u>*

Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով:

Կազմակերպության հիմնական հասույթը գոյանում է ոսկերչական իրերի արտադրությունից և վաճառքից: Այլ հասույթները կարող են ներառել՝ ծառայությունների վաճառքից հասույթը, վարձակալությունից և տոկոսներից հասույթը: Կազմակերպության ակտիվների (նյութերի, հիմնական միջոցների) վաճառքից եկամուտը կամ օգուտը չի դասակարգվում որպես հասույթ:

Ոսկերչական արտադրանքի վաճառքից հասույթը չափվում է ամսական պարբերականությամբ՝ ելնելով տվյալ ամսա ընթացքում վաճառված արտադրանքից:

Տոկոսային հասույթը ճանաչվում է արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով:

Վարձակալությունից հասույթը ճանաչվում է գծային հիմունքով:

Երբ այլ ծառայությունների մատուցման գործարքի արդյունքը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, գործարքից հասույթը ճանաչվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանի հիման վրա: Գործարքի արդյունքը կարելի է արժանահավատորեն գնահատել, եթե բավարարվում են հետևյալ բոլոր պայմանները՝

ա) հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը.

բ) հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն դեպի կազմակերպություն.

գ) հնարավոր է արժանահավատորեն չափել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանը.

դ) հնարավոր է արժանահավատորեն չափել գործարքի համար կատարված և գործարքն ավարտելու համար անհրաժեշտ ծախսումները:

Երբ ծառայությունների մատուցման գործարքի արդյունքը հնարավոր չէ արժանահավատորեն գնահատել, հասույթը ճանաչվում է միայն ճանաչված այն ծախսերի չափով, որոնք հավանական է, որ կփոխհատուցվեն:

*3.7. <u>Արտարժութային գործարքներ և փոխարժեքային տարբերություններ</u>*

Արտարժույթ Ընկերության ֆունկցիոնալ արժույթից՝ ՀՀ դրամից, տարբեր ցանկացած այլ արժույթ է: Արտարժույթով գործարքը այնպիսի գործարք է, որը սահմանված է արտարժույթով, կամ որը պահանջում է արտարժույթով մարում:

Արտարժույթով գործարքը սկզբնապես ճանաչման պահին գրանցվում է ֆունկցիոնալ արժույթով՝ արտարժույթի գումարի նկատմամբ կիրառելով ֆունկցիոնալ արժույթի և արտարժույթի միջև գործարքի ամսաթվի դրությամբ առկա փոխանակման փոխարժեքը: Գործարքի ամսաթիվ է համարվում այն ամսաթիվը, երբ գործարքն առաջին անգամ որակվում է որպես ճանաչման ենթակա՝ ՖՀՄՍ-ների համաձայն: Գործնական նկատառումներից ելնելով՝ կարող է կիրառվել մի փոխարժեք, որը մոտավորապես հավասար է գործառնության ամսաթվի փոխանակման փոխարժեքին, օրինակ՝ շաբաթվա կամ ամսվա միջին փոխարժեքը կարող է կիրառվել միևնույն արտարժույթով կատարված բոլոր գործառնությունների համար, որոնք տեղի են ունեցել տվյալ հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում, բացառությամբ, երբ փոխանակման փոխարժեքը տվյալ ժամանակաշրջանի ընթացքում ենթարկվում է զգալի տատանումների:

Փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են դրամային հոդվածների մարման արդյունքում կամ երբ դրամային հոդվածները հաշվետվության մեջ ներկայացվում են մի փոխարժեքով, որը տարբերվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում դրանց սկզբնական գրանցման կամ նախորդ ֆինանսական հաշվետվություններում գրանցման փոխարժեքից, ճանաչվում են որպես օգուտ կամ կորուստ այն ժամանակաշրջանում, որում դրանք առաջացել են:

*3.8. <u>Փոխառության ծախսումներ</u>*

Փոխառության ծախսումները տոկոսների վճարման և այլ ծախսումներն են, որոնք կազմակերպությունը կատարում է՝ կապված փոխառու միջոցների ստացման հետ: Փոխառության ծախսումները կարող են ներառել՝

ա) արդյունավետ տոկոսային մեթոդի կիրառմամբ հաշվարկված տոկոսային ծախսը,

բ) ֆինանսական վարձակալությանը վերաբերող ֆինանսական վճարները՝ ճանաչված համաձայն «Վարձակալություն» ՀՀՄՍ 17 ստանդարտի և

գ) փոխարժեքային տարբերությունները, որոնք առաջանում են արտարժույթով փոխառություններից՝ այնքանով, որքանով դրանք դիտվում են որպես տոկոսների գծով ծախսումների ճշգրտում

Փոխառության ծախսումները, որոնք անմիջականորեն վերագրելի են որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանը, պետք է կապիտալացվեն՝ որպես այդ ակտիվի արժեքի

մաս: Մնացած փոխառության ծախսումները ճանաչում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք կատարվել (առաջացել) են:

### *3.9. Շահութահարկ*

3.9.1. Եթե ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար արդեն վճարված գումարը՝ գերազանցում է այդ ժամանակաշրջանների համար վճարման ենթակա գումարը, ապա գերազանցող մասը ճանաչվում է որպես ակտիվ:

3.9.2. Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար ընթացիկ հարկային պարտավորությունները (ակտիվները) չափվում են այն գումարով, որն ակնկալվում է, որ կվճարվի բյուջե (կփոխհատուցվի բյուջեից)՝ կիրառելով հարկերի դրույքները (և հարկային օրենքները), որոնք ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

3.9.3. Հետաձգված հարկային պարտավորությունը ճանաչվում է բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար, բացառությամբ այն հետաձգված հարկային պարտավորությունների, որոնք առաջանում են՝

ա) գուդվիլից, եթե դրա ամորտիզացիան հարկային նպատակներով նվազեցման ենթակա չէ,

բ) ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչումից՝ այնպիսի գործարքի ներքո, որը՝ ձեռնարկատիրական գործունեության միավորում չէ և այդ գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ հարկվող շահույթի (հարկային վնասի) վրա:

3.9.4. Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է, բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը, բացառությամբ այն հետաձգված հարկային ակտիվների, որոնք առաջանում են՝ ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչումից՝ այնպիսի գործարքի ներքո, որը ձեռնարկատիրական գործունեության միավորում չէ և այդ գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ հարկվող շահույթի (հարկային վնասի) վրա:

3.9.5. Առաջիկա ժամանակաշրջաններ փոխանցված չօգտագործված հարկային վնասների և չօգտագործված հարկային զեղչերի համար ճանաչվում է հետաձգված հարկային ակտիվ այն չափով, որ չափով հավանական է, որ Կազմակերպությունը ապագայում կունենա հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել այդ չօգտագործված հարկային վնասները և չօգտագործված հարկային զեղչերը:

3.9.6. Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնք ակնկալվում է, որ կիրառման մեջ կլինեն ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն

դրույքները (և հարկային օրենքները), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

3.9.7. Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չեն զեղչվում:

3.9.8. Հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ստուգվում (վերանայվում) է: Կազմակերպությունը նվազեցնում է հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքն այն չափով, որքանով որ այլևս հավանական չէ, որ կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել: Ցանկացած այդպիսի նվազեցում պետք է վերականգնվի այն չափով, որքանով որ հավանական է դառնում բավարար հարկվող շահույթի ստացումը:

3.9.9. Ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են որպես եկամուտ կամ ծախս և ներառվում են տվյալ ժամանակաշրջանի շահույթի կամ վնասի մեջ, բացառությամբ հարկի այն մասի, որն առաջանում է՝

ա) գործարքից կամ իրադարձությունից, որը նույն կամ մեկ այլ ժամանակաշրջանում ճանաչվում է շահույթից կամ վնասից դուրս՝ կա՛մ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, կա՛մ ուղղակիորեն սեփական կապիտալում, կամ

բ) ձեռնարկատիրական գործունեության միավորումից:

3.9.10. Ընթացիկ և հետաձգված հարկը ճանաչվում է շահույթից կամ վնասից դուրս, եթե հարկը վերաբերում է այն հոդվածներին, որոնք, նույն կամ մեկ այլ ժամանակաշրջանում, ճանաչված են շահույթից կամ վնասից դուրս: Հետևաբար, ընթացիկ և հետաձգված հարկերը, որոնք վերաբերում են այն հոդվածներին, որոնք, նույն կամ տարբեր ժամանակաշրջանում, ճանաչված են՝

ա) այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում.

բ) ուղղակիորեն սեփական կապիտալում, ճանաչվում են ուղղակիորեն սեփական կապիտալում (օրինակ՝ չբաշխված շահույթի սկզբնական մնացորդի ճշգրտում, որն առաջանում է կա՛մ հետընթաց կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունից, կա՛մ սխալի ուղղումից):

3.9.11. Կազմակերպությունը ընթացիկ հարկային ակտիվները և ընթացիկ հարկային պարտավորությունները հաշվանցում է այն և միայն այն դեպքում, եթե՝

ա) ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք,

բ) մտադիր է՝ կամ հաշվարկն իրականացնել (ակտիվը կամ պարտավորությունը մարել) զուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ:

3.9.12. Կազմակերպությունը հետաձգված հարկային ակտիվը և հետաձգված հարկային պարտավորությունը հաշվանցում է այն և միայն այն դեպքում, եթե՝

ա) ունի իրավաբանորեն ամրագրված իրավունք հաշվանցելու ընթացիկ հարկային ակտիվները ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց,

բ) հետաձգված հարկային ակտիվը և հետաձգված հարկային պարտավորությունը վերաբերվում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից նույն հարկատուից:

### *3.10. Պահուստներ, պայմանական պարտավորություններ և ակտիվներ*

Պահուստը անորոշ գումարով կամ ժամկետով պարտավորությունն է: Պահուստ ճանաչվում է, երբ որպես անցյալ դեպքի արդյունք, Ընկերությունն ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն, որը կարող է արժանահավատորեն գնահատվել, և հավանական է, որ այդ պարտականությունը կատարելու համար կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Պահուստը չափվում է ակնկալվող ապագա դրամական հոսքերի գեղչմամբ՝ օգտագործելով մինչև հարկումը այնպիսի դրույք, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի և տվյալ պարտավորությանը հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատականը: Ժամանակ անցնելուն զուգընթաց պահուստի գծով գեղչի հետպտույտը ճանաչվում է որպես ֆինանսական ծախս:

Այն պարտավորությունները և ակտիվները, որոնք չեն ճանաչվում, քանի որ դրանց գոյությունը հաստատվելու ապագա անորոշ դեպքի, տեղի ունենալով կամ չունենալով, որոնք ամբողջովին չեն վերահսկվում կազմակերպության կողմից համարվում են պայմանական: Պայմանական պարտավորություն է համարվում նաև ներկա պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, որը, չի ճանաչվում այն պատճառով, որ կամ հավանական չէ այդ պարտականությունը մարելու համար տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք պահանջվելը, կամ էլ պարտականության գումարը չի կարող բավարար արժանահավատությամբ չափվել:

### *3.11. Աշխատակիցների հատուցումներ*

Աշխատակիցների հատուցումները ներառում են՝

a. Աշխատավարձը
b. սոցիալական ապահովության վճարները,
c. կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները, ինչպիսին է վճարովի տարեկան արձակուրդը,
d. պարգևավճարները:

Աշխատակիցների հատուցումների այն գումարը, որն ակնկալվում է վճարել հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում աշխատակիցներից ստացված ծառայության դիմաց, ճանաչվում է՝

ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված գումարները հանելուց հետո, և բ) որպես ծախս, բացառությամբ, երբ որևէ ստանդարտով պահանջվում կամ թույլատրվում է այդ հատուցումների ներառումը որևէ ակտիվի ինքնարժեքի (սկզբնական արժեքի) մեջ: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների գումարը, ապա Ընկերությունն այդ գերազանցումը ճանաչում է

որպես ակտիվ (կանխավճարված ծախս) այնքանով, որքանով այդ կանխավճարը կհանգեցնի, օրինակ, ապագա վճարումների նվազման կամ դրամական միջոցների վերադարձի:

Ընկերությունը աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումը, կուտակվող փոխհատուցելի բացակայությունների ձևով (ինչպիսին է վճարովի ամենամյա արձակուրդը) ճանաչում է, երբ աշխատակիցները մատուցում են ծառայություն, որը ավելացնում է ապագա փոխհատուցելի բացակայությունների նրանց իրավունքը: Կուտակվող փոխհատուցելի բացակայությունների գծով ակնկալվող ծախսումը չափվում է այն լրացուցիչ գումարով, որն Ընկերությունն ակնկալում է վճարել որպես հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կուտակված չօգտագործված իրավունքների արդյունք:

Ընկերությունը պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումը ճանաչում, երբ՝

ա) այն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք և

բ) պարտականությունը կարող է արժանահավատորեն գնահատվել: Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Ընկերությունը վարման կատարումից խուսափելու որևէ իրատեսական հնարավորություն չունի:

### 3.12 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

## Թողարկված, բայց դեռ ուժի մեջ չմտած ստանդարտներ և փոփոխություններ ամբողջական ՖՀՄՍ-ներում առ 31/12/2021թ.

**ՖՀՄՍ1** ***«ՖՀՄՍ-ների առաջին անգամ որդեգրումը». Դուստր ընկերությունը որպես առաջին անգամ ՖՀՄՍ որդեգրող***

ՖՀՄՍ 1-ում կատարվել է լրացում, ըստ որի եթե դուստր ընկերությունը որդեգրում է ՖՀՄՍ-ները ավելի ուշ քան մայր կազմակերպությունը և առկա է հաշվետվությունների վերահաշվարկից առաջացող փոխարժեքային տարբերություն, ապա ՖՀՄՍ որդեգրելու պահի դրությամբ դուստրը կարող է փոխարժեքային պահուստը որոշել մայր կազմակերպության կողմից ներկայացված հաշվետվությունում համապատասխան փոխարժեքային տարբերության գումարի չափով:

*ՖՀՄՍ 1-ի այս լրացումը ուժի մեջ է մտնում 2022թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:*

**ՖՀՄՍ9** ***«Ֆինանսական գործիքներ». Ֆինանսական պարտավորության ապաճանաչման 10% շեմի հաշվարկում վճարների ներառումը***

Համաձայն ՖՀՄՍ 9-ի երբ ֆինանսական պարտավորության պայմաններում կատարվում է փոփոխություն, այն պետք է հաշվառվի որպես գոյություն ունեցող պարտավորության ապաճանաչում և նոր պարտավորության ճանաչում, եթե վերափոխված դրամական հոսքերի ներկա արժեքը տարբերվում է հին պայմաններով սպասվող դրամական հոսքերի ներկա արժեքից առնվազն վերջինիս 10%-ի չափով: ՖՀՄՍ 9-ում կատարվել է պարզաբանում, ըստ որի ներկա արժեքի հաշվարկում դիտարկվում են միայն այն վճարներից առաջացող զուտ հոսքերը, որոնք կատարվել են փոխառու և փոխատու միջև՝ ներառյալ այլ կողմերի անունից կատարված վճարները:

*ՖՀՄՍ 9-ի այս խմբագրումը ուժի մեջ են մտնում 2022թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:*

**ՀՀՄՍ41** ***«Գյուղատնտեսություն». Հարկերի ազդեցությունն իրական արժեքը որոշելիս***

Համաձայն ՀՀՄՍ 41-ի այս փոփոխության կենսաբանական ակտիվի, ինչպես նաև բերքահավաքի պահին գյուղատնտեսական արտադրանքի իրական արժեքը որոշելիս եթե կիրառվում է սպասվող հոսքերի ներկա արժեքի մոդելը, ապա դիտարկվում են նաև հարկերի գծով սպասվող հոսքերը: Նախկին խմբագրմամբ հարկերի գծով հոսքերը չպետք է ներառվերին:

*ՀՀՄՍ 41-ի այս փոփոխությունը ուժի մեջ են մտնում 2022թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:*

**ՖՀՄՍ3 *«Զեռնարկատիրական գործունեության միավորումներ». Հղումներ հայեցակարգային հիմունքներին***

ՖՀՄՍ 3-ում կատարված այս խմբագրմամբ նախատեսված է բիզնես միավորման դեպքում որոշելի ակտիվներն և պարտավորությունները որոշել ըստ հիմունքներում նախատեսված ակտիվի և պարտավորության սահմանումների և ճանաչման պահանջների:

Այնուամենայնիվ, եթե պարտավորությունը կամ պայմանական պարտավորությունը գտնվում է՝ ՀՀՄՍ37 «Պահուստներ, պայմանական ակտիվներ և պայմանական պարտավորություններ» կամ ՖՀՄՍՍԿ21 «Պարտադիր վճարներ» ստանդարտների գործողության ոլորտում, ապա հիմունքների փոխարեն կիրառվում են նշված ստանդարտների ճանաչման պահանջները:

*ՖՀՄՍ 3-ի այս խմբագրումը ուժի մեջ են մտնում 2022թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:*

**ՀՀՄՍ1 *«Ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը». Պարտավորությունների դասակարգումը***

ՀՀՄՍ 1-ում կատարվել է փոփոխություն, ըստ որի եթե կազմակերպությունը իրավունք ունի երկարաձգել պարտավորության մարումը հաշվետու ամսաթվից հետո նվազագույնը 12 ամիս, ապա այն դասակարգվում է որպես ոչ ընթացիկ՝ անկախ այդ իրավունքն օգտագործելու մտադրությունից:

*ՀՀՄՍ 1-ի այս փոփոխությունը ուժի մեջ են մտնում 2023թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:*

**ՀՀՄՍ16 *«Հիմնական միջոցներ». Մինչև նախանշված նպատակներով օգտագործումը ստացված հասույթներ***

ՀՀՄՍ 16-ում կատարվել է փոփոխություն, որի համաձայն մինչև հիմնական միջոցի աշխատանքային վիճակի հասնելը դրա կողմից գեներացված օգուտները և դրան վերագրվող ուղղակի ծախսումները (օրինակ տեստավորման ընթացքում արտադրանքի թողարկումը) պետք է ճանաչվեն շահույթում կամ վնասում՝ նախկինում նախատեսված ինքնարժեքի նվազեցման փոխարեն:

*ՀՀՄՍ 16-ի այս փոփոխությունը ուժի մեջ են մտնում 2022թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:*

**ՀՀՄՍ37 *«Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ». Անբարենպաստ պայմանագրերի կատարման ծախսումները***

ՀՀՄՍ 37-ում կատարվել է խմբագրում, որտեղ պարզաբանվում որ պայմանագրի անբարենպաստ լինելը և համապատասխանաբար պահուստի գնահատականը որոշելիս դիտարկվում են միայն պայմանագրի կատարմանը ուղղակիորեն վերագրվող ծախսումները: Դա ներառում է նաև այլ ծախսումների (օրինակ սարքավորումների մաշվածության) բաշխումից առաջացած մասերը, որոնք ուղղակիորեն վերագրելի են պայմանագրի կատարմանը:

*ՀՀՄՍ 37-ի այս փոփոխությունը ուժի մեջ են մտնում 2022թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար:*

## 3.2 Նախորդ տարիների սխալների ուղղում

Ֆինանսական հաշվետվությունները, ներառյալ նախորդ ժամանակաշրջանների համադրելի տեղեկատվությունը, ներկայացվում են այնպես, իբր էական սխալներն ուղղվել են այն ժամանակաշրջանում, որում դրանք կատարվել են: Հետևաբար, ներկայացված յուրաքանչյուր ժամանակաշրջանին վերաբերող ուղղման գումարը ներառվում է այդ հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական արդյունքների մեջ: Ներկայացված ժամանակաշրջաններից ամենավաղ ժամանակաշրջանի կուտակված արդյունքների սկզբնական մնացորդը կարգավորվում է ճշգրտումների այն գումարով, որը վերաբերում է այն ժամանակաշրջաններին, որոնք նախորդում են վերջին ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների համադրելի տեղեկատվության մեջ ներգրավված ժամանակաշրջաններին: Նախորդող ժամանակաշրջանների վերաբերյալ ներկայացված որևէ այլ տեղեկատվություն նույնպես վերաներկայացվում է:

## 3.3 Անընդհատության սկզբունք.

Ընկերությունը սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստել է անընդհատության սկզբունքով:

## 4. Հիմնական միջոցներ

| | Շենք | Հողամաս | Մեքենասարք ավորումներ և այլ գույք | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| *Արժեք* | | | | |
| **Մնացորդ առ 01.01.2020թ** | 915, 432 | 1,671,900 | 638,030 | 3,225,362 |
| Ավելացում | - | | 21,169 | 21,169 |
| Օտարում | - | | (153) | (153) |
| **Մնացորդ առ 01.01.2021թ** | 915,432 | 1,671,900 | 659,046 | 3,246,378 |
| | | | | |
| **Մնացորդ առ 01.01.2021թ** | 915,432 | 1,671,900 | 659,046 | 3,246,378 |
| Ավելացում | - | | 16,440 | 16,440 |
| Օտարում | - | | (3,400) | (3,400) |
| **Մնացորդ առ 01.01.2022թ** | 915,432 | 1,671,900 | 672,086 | 3,259,418 |
| *Մաշվածություն* | | | | |
| **Մնացորդ առ 01.01.2020թ** | 143,740 | - | 583,254 | 726,994 |
| Տարվա մաշվածություն | 14,695 | - | 24,401 | 39,096 |
| Օտարում | - | - | - | - |
| **Մնացորդ առ 01.01.2021թ** | 158,435 | - | 607,655 | 766,090 |
| | | | | |
| **Մնացորդ առ 01.01.2021թ** | 158,435 | - | 607,655 | 766,090 |
| Տարվա մաշվածություն | 14,695 | - | 22,532 | 37,227 |
| Օտարում | - | - | (3,400) | (3,400) |
| **Մնացորդ առ 01.01.2022թ** | 173,130 | - | 626,787 | 799,917 |
| | | | | |
| *Հաշվեկշռային արժեք* | | | | |
| **Առ 01.01.2020թ** | 771,692 | 1,671,900 | 54,776 | 2,498,368 |
| **Առ 01.01.2021թ** | 756,997 | 1,671,900 | 51,391 | 2,480,288 |
| **Առ 01.01.2021թ** | 756,997 | 1,671,900 | 51,391 | 2,480,288 |
| **Առ 01.01.2022թ** | 742,302 | 1,671,900 | 45,299 | 2,459,501 |

## 5. Օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցներ

| | 31.12.2021թ. | 31.12.2020թ |
|---|---|---|
| Կառուցման ընթացքում գտնվող շինություն | 32,740 | 32,740 |
| **Ընդամենը** | **32,740** | **32,740** |

32,740 հազ. դրամ <Կառուցման ընթացքում գտնվող շինության> գծով կա հայտանիշ արժեզրկման վերաբերյալ, սակայն Ընկերությունը իրականացրել է արժեզրկման գնահատում, որի արդյունքում արժեզրկում չի առաջացել:

## 6. Ոչ նյութական ակտիվներ

| | Ապրանքանշան | Ծրագրային փաթեթ | Նախագծեր և այլ ոչ նյութական ակտիվներ | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| *Արժեք* | | | | |
| **Մնացորդ առ 01.01.2020թ.** | 32,133 | 754 | 51,284 | 84,171 |
| Ավելացում | - | - | - | - |
| Օտարում | - | - | - | - |
| **Մնացորդ առ 01.01.2021թ.** | 32,133 | 754 | 51,284 | 84,171 |
| **Մնացորդ առ 01.01.2021թ** | 32,133 | 754 | 51,284 | 84,171 |
| Ավելացում | - | - | - | - |
| Օտարում | - | - | - | - |
| **Մնացորդ առ 01.01.2022թ.** | 32,133 | 754 | 51,284 | 84,171 |
| *Մաշվածություն* | | | | |
| **Մնացորդ առ 01.01.2020թ** | 32,133 | 754 | 49,040 | 81,927 |
| Տարվա ամորտիզացիա | - | - | 994 | 994 |
| **Մնացորդ առ 01.01.2021թ** | 32,133 | 754 | 50,034 | 82,921 |
| **Մնացորդ առ 01.01.2021թ** | 32,133 | 754 | 50,034 | 82,921 |
| Տարվա ամորտիզացիա | - | - | 417 | 417 |
| **Մնացորդ առ 01.01.2022թ.** | 32,133 | 754 | 50,451 | 83,338 |
| *Հաշվեկշռային արժեք* | | | | |
| **Առ 01.01.2020թ** | - | - | 2,244 | 2,244 |
| **Առ 01.01.2021թ** | - | - | 1,250 | 1,250 |
| **Առ 01.01.2021թ** | - | - | 1,250 | 1,250 |
| **Առ 01.01.2022թ** | - | - | 833 | 833 |

## 7. Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

*Ճանաչված հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ*

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները կապված են ստորև նշվածների հետ.

| | Ակտիվներ | | Պարտավորություններ | | Զուտ ակտիվ (պարտավորություն) | |
|---|---|---|---|---|---|---|
| Հազ. դրամ | 31.12.2021 | 31.12.20թ | 31.12.21թ | 31.12.20թ | 31.12.2021 | 31.12.20թ |
| Փոխառություն | - | - | - | | - | - |
| Դ-տ պարտքերի | 28,322 | 29,030 | - | - | 28,322 | 29,030 |
| Արժեզրկումից կորոստ | - | - | - | - | - | - |
| Հիմնական միջոցներ | - | - | (225,698) | (223,575) | (225,698) | (223,575) |
| Ընթացիկ պահուստ | 3,350 | 3,836 | - | - | 3,350 | 3,836 |
| **Զուտ հարկային ակտիվներ (պարտավորություններ)** | **31,672** | **32,866** | **(225,698)** | **(223,575)** | **(194,026)** | **(190,709)** |

*(a) Փոփոխություններ ժամանակավոր տարբերություններում տարվա ընթացքում*

| Հազ. դրամ | 31 դեկտեմբերի 2020թիվ | Ճանաչված շահույթում կամ վնասում 2021-ի 12 ամիսների | Ճանաչված սեփական կապիտալում 2021-ի 12 ամիսների | 31 դեկտեմբերի 2021թիվ |
|---|---|---|---|---|
| Փոխառություն | - | - | | - |
| Դ-տ պարտքերի | 29,030 | (708) | - | 28,322 |
| արժեզրկումից կորոստ | | | | |
| Հիմնական միջոցներ | (223,575) | (2,123) | | (225,698) |
| Ընթացիկ պահուստ | 3,836 | (486) | - | 3,350 |
| **Ընդամենը** | **(190,709)** | **(3,317)** | **-** | **(194,026)** |

## 8. Պաշարներ

| | 31.12.2021թ. | 31.12.2020թ. |
|---|---|---|
| Նյութեր | 924,934 | 771,087 |
| Ապրանքներ | 2,201 | 2,201 |
| Արտադրանք | 1,084,347 | 998,272 |
| Անավարտ արտադրություն | 78,654 | 91,360 |
| Այլ | - | - |
| **Ընդամենը** | **2,090,136** | **1,862,920** |

## 9. Տրված ընթացիկ կանխավճարներ

| | 31.12.2021թ. | 31.12.2020թ. |
|---|---|---|
| Ծառայությունների և հումք նյութերի համար | 29,806 | 35,350 |
| Ընդամենը | 29,806 | 35,350 |

31.12.2021թ. դրությամբ առկա 29,806 հազ. դրամ տրամադրված կանխավճարից՝

Ա) 4,949.1 հազ. դրամ կամ 16.6 տոկոս պարտքը վերաբերում ԵՈԳ ԲԲԸ –ին,

Բ) 5,038.1 հազ. դրամ կամ 16.9 տոկոս պարտքը վերաբերում SHENLI JEWELLERY (HK) LIMITED. –ին,

## 10. Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր

| | 31.12.2021թ. | 31.12.2020թ. |
|---|---|---|
| Վաճառքների գծով | 40,234 | 60,597 |
| Այլ ընկերություններից փոխանցված | 811 | 2,155 |
| Ընդամենը | 41,045 | 62,752 |

31.12.2021թ. դրությամբ առկա 41,045.0 հազ. դրամ վաճառքների գծով դեբիտորական պարտքերից

ա/ 30,682.4 հազ. դրամ կամ 74.75 տոկոս պարտքը վերաբերում է MBSG CORPORATION-ին,

բ/ 2,863.5 հազ. դրամ կամ 6.98 տոկոս պարտքը վերաբերում է Armat Gold TOO-ին,

գ/ 9,383.7 հազ. դրամ կամ 22.86 տոկոս պարտքը վերաբերում է OOO ORION –ին,

Վաճառքների գծով դեբիտորական պարտքերից սպասվող պարտքային կորուստներ չեն առաջացել:

## 11.Դրամական միջոցներ

| | 31.12.2021թ. | 31.12.2020թ. |
|---|---|---|
| Ընթացիկ հաշիվ ՀՀ դրամով | 39,690 | 93,422 |
| Ընթացիկ հաշիվ արտարժույթով | 6,651 | 148 |
| Դրամարկղ | 10,804 | 12,609 |
| Ընդամենը | 57,145 | 106,179 |

## 12.Փոխառություն

| | 31.12.2021թ. | 31.12.2020թ. |
|---|---|---|
| Տրամադրված կարճաժամկետ փոխառություն | 24,312 | 24,312 |
| | 24,312 | 24,312 |

Գումարը տրամադրվել է <Երևանի Ոսկերչական Գործարան> ԲԲԸ-ին: Գումարները տրամադրվել են անտոկոս հիմունքով:

## 13. Այլ ընթացիկ ակտիվներ

| | 31.12.2021թ. | 31.12.2020թ. |
|---|---|---|
| Առհաշիվ տրված գումարներ | 75 | 60 |
| Ընթացիկ ակտիվներ հետաձգված ԱԱՀ-ի գծով | 72 | 72 |
| Ընթացիկ դեբիտորական պարտք աշխատավարձի վճարման գծով | - | - |
| Դրամական միջոցներ ճանապարհին | 3,382 | - |
| Ընդամենը | 3,529 | 132 |

## 14. Կանոնադրական կապիտալ

Ընկերությունն ունի 1,095,340 հատ սովորական բաժնետոմս, 1,000 դրամ անվանական արժեքով: Բաժնետոմսերի ընդհանուր քանակի 75.89%-ը՝ 831,218 բաժնետոմսի սեփականատեր է համարվում «ԳՆՈՄՈՆ» ՍՊԸ-ն, 10.13 %-110,963 հատ բաժնետոմսերի սեփականատեր է համարվում Էմիլ Գրիգորյանը, 2.28%-25,000 հատ բաժնետոմսերի սեփականատեր է համարվում Սեդա Հակոբյանը, իսկ մնացած 11.7%- 128,159 հատ բաժնետոմսերը բաշխված է 1,454 բաժնետերերի միջև:

| | 31.12.2021թ. | 31.12.2020թ. |
|---|---|---|
| | 1,095,340 | 1,095,340 |
| Ընդամենը | 1,095,340 | 1,095,340 |

## 15. Բանկային վարկեր

| | 31.12.2021թ. | 31.12.2020թ. |
|---|---|---|
| Երկարաժամկետ բանկային վարկեր | - | - |
| Կարճաժամկետ բանկային վարկեր (օվերդրաֆտ) | 105,676 | 84,670 |
| Երկարաժամկետ վարկի կարճաժ. մաս | - | - |
| Ընդամենը | 105,676 | 84,670 |

## 16. Ստացված կանխավճարներ

| | 31.12.2021թ. | 31.12.2020թ. |
|---|---|---|
| Ծառայությունների և հումք նյութերի համար | 110,987 | 79,249 |
| Ընդամենը | 110,987 | 79,249 |

31.12.2021թ. դրությամբ առկա 110,987 հազ. դրամ ստացված կանխավճարից՝

Ա.59,045.20 հազ. դրամ կամ 53.20 տոկոս պարտքը վերաբերում է Nasibyan Susanna –ին

Բ. 39,922.20 հազ. դրամ կամ 35.97 տոկոս պարտքը վերաբերում է Nyrieva Akgiz-ին

## 17. Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր

| | 31.12.2021թ. | 31.12.2020թ. |
|---|---|---|
| Հումք նյութերի գծով | 16,717 | 18,108 |
| Ծառայությունների գծով | 4,129 | 4,996 |
| Ապրանքների գծով | 1,484 | 701 |
| Հիմնական միջոցների գծով | 107 | 127 |
| Ընդամենը | 22,437 | 23,932 |

31.12.2021թ. դրությամբ 22,437.0 հազ. դրամ կրեդիտորական պարտքերից 15,142.4 հազ. դրամը կամ 67.49 տոկոս պարտքը վերաբերում է OOO Saturn ընկերությանը:

## 18. Հարկերի գծով պարտավորություններ

| | 31.12.2021թ. | 31.12.2020թ. |
|---|---|---|
| Պարտավորություններ սոցապ վճարների գծով | 840 | 257 |
| ԱԱՀ | 17,890 | 24,349 |
| Եկամտային հարկ | 4,320 | 3,376 |
| Գույքահարկ, հողի հարկ | - | 550 |
| Շահութահարկ | 10,718 | 2,872 |
| Այլ | 59 | 33 |
| Ընդամենը | 33,827 | 31,437 |

## 19. Հասույթ

| | 2021թ. 12-ամիս | 2020թ. 12-ամիս |
|---|---|---|
| Արտադրանքի վաճառքից | 1,063,838 | 607,716 |
| Ծառայության վաճառքից | 6,950 | 1,989 |
| Այլ եկամուտներ՝ ապրանքների իրացումից | 10,775 | 3,595 |
| Ընդամենը | 1,081,563 | 613,300 |

## 20. Արտադրանքի և ծառայությունների ինքնարժեք

| | 2021թ. 12-ամիս | 2020թ. 12-ամիս |
|---|---|---|
| Արտադրանքի ինքնարժեք | 798,795 | 449,950 |
| Ծառայությունների ինքնարժեք | - | - |
| Իրացված ապրանքների ինքնարժեք | 8,031 | 3,048 |
| Ընդամենը | 806,826 | 452,998 |

## 21. Այլ եկամուտներ

| | 2021թ. 12-ամիս | 2020թ. 12-ամիս |
|---|---|---|
| Ակտիվների վաճառքից | 152,558 | 32,682 |
| Գործառնական վարձակալությունից | 11,469 | 5,020 |
| Այլ եկամուտներ՝ | 19,777 | 3,310 |
| **Ընդամենը** | **183,804** | **41,012** |

## 22. Իրացման ծախսեր

| | 2021թ. 12-ամիս | 2020թ. 12-ամիս |
|---|---|---|
| Աշխատավարձ և սոց ապահովագրություն | 45,172 | 29,719 |
| Հիմնական միջոցների մաշվածություն | 1,664 | 1,292 |
| Փաթեթավորման, տարայավորման ծախսեր | 8,159 | 5,065 |
| Այլ | 49,238 | 19,550 |
| **Ընդամենը** | **104,233** | **55,626** |

## 23. Վարչական ծախսեր

| | 2021թ. 12-ամիս | 2020թ. 12-ամիս |
|---|---|---|
| Աշխատավարձ և սոց ապահովագրություն | 46,043 | 34,319 |
| Հիմնական միջոցների մաշվածություն | 8,710 | 6,846 |
| Գործուղման և ներկայացուցչական ծախսեր | 3,642 | 407 |
| Փոստ և հեռահաղորդակցություն | 1,071 | 1,230 |
| Գրասենյակային և այլ ծախսեր | 1,482 | 708 |
| Աուդիտորական և խորհրդատվական ծախսեր | 1,750 | 1,750 |
| Բանկային ծառայություններից ծախսեր | 12,912 | 4,489 |
| Չփոխհատուցվող հարկերի գծով ծախս | 1,311 | 1,107 |
| Այլ | 6,732 | 6,871 |
| **Ընդամենը** | **83,653** | **57,727** |

## 24. Գործառնական այլ ծախսեր

| | 2021թ. 12-ամիս | 2020թ. 12-ամիս |
|---|---|---|
| Ակտիվների՝ պաշարների վաճառքից ծախսեր | 140,604 | 26,225 |
| Դեբիտորական պարտքերի արժեզրկումից կորուստներ՝ | 11,289 | - |
| Այլ ծախսեր՝ | 14,845 | 20,103 |
| **Ընդամենը** | **166,738** | **46,328** |

## 25. Ֆինանսական ծախսեր

| | 2021թ. 12-ամիս | 2020թ. 12-ամիս |
|---|---|---|
| Վարկերի տոկոսային ծախսեր | 4,663 | 9,244 |
| **Ընդամենը** | **4,663** | **9,244** |

## 26. Արտարժույթի փոխարժեքային տարբերությունից զուտ արդյունք

| | 2021թ. 12-ամիս | 2020թ. 12-ամիս |
|---|---|---|
| Փոխարժեքային տարբերությունից եկամուտ | 67,016 | 60,217 |
| Փոխարժեքային տարբերությունից ծախսեր | (57,340) | (66,937) |
| **Ընդամենը** | **9,676** | **(6,720)** |

## 27. Այլ ոչ գործառնական գործունեությունից արդյունք

| | 2021թ. 12-ամիս | 2020թ. 12-ամիս |
|---|---|---|
| Ակտիվների՝ հիմնական միջոցների վաճառքից զուտ եկամուտ/ծախս | 607 | 680 |
| Անհատույց տրված ակտիվներ | (2,348) | (1,223) |
| **Ընդամենը** | **(1,741)** | **(543)** |

## 28. Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)

| | 2021թ. 12-ամիս | 2020թ. 12-ամիս |
|---|---|---|
| Ընթացիկ տարվա շահութահարկ | 14,712 | 5,305 |
| Նախորդ տարվա շահութահարկի ուղղում (ստուգմամբ հայտնաբերված) | - | - |
| Հետաձգված հարկի գծով (փոխհատուցում) | 3,317 | (662) |
| **Ընդամենը** | **18,029** | **4,643** |

Ընկերության կիրառվող հարկի դրույքը 18% է (2020թ.՝ 18%):

## 29. Գործարքներ կապակցված կողմերի հետ

Ընկերության կապակցված կողմերն են բաժնետերերը, ղեկավար անձինք:

Ընկերության ղեկավարությունը ստացել է հետևյալ հատուցումները՝

| հազ. դրամ | 2021թ. 12-ամիս | 2020թ. 12-ամիս |
|---|---|---|
| Աշխատանքի վարձատրություն | 26,252 | 17,705 |
| Շահաբաժիններ | - | - |
| | **26,252** | **17,705** |

## 30. Գրավադրված ակտիվներ

Ընկերությունը բանկային վարկի գծով որպես ապահովություն գրավադրել է սեփականության իրավունքով իրեն պատկանող՝ անշարժ գույք,- պայմանագիր՝ ՊՄԳ02-0057-19/ԳՎ 28.06.2019թ:

**Ֆինանսական գործիքներ և ռիսկերի կառավարում***Ընդհանուր ակնարկ*

Ընկերությունը ենթարկված է ֆինանսական գործիքների օգտագործումից առաջացող հետևյալ ռիսկերին՝

պարտքային ռիսկ

- իրացվելիության ռիսկ
- շուկայական ռիսկ.

Սույն ծանոթագրությունում ներկայացվում է տեղեկատվություն՝ վերոնշյալ ռիսկերից յուրաքանչյուրին Ընկերության ենթարկվածության մասին, այդ ռիսկերը չափելու և կառավարելու գծով Ընկերության նպատակներն ու քաղաքականությունը: Հավելյալ թվային բացահայտումները ներառված են սույն ֆինանսական հաշվետվությունների տարբեր հատվածներում:

Ընկերության ռիսկերի կառավարման ռազմավարությանն ու ընթացակարգերի սահմանման ու վերահսկման ընդհանուր պատասխանատվությունը կրում է ղեկավարությունը:

Ընկերությունը, վերապատրաստումների, կառավարման ստանդարտների և ընթացակարգերի միջոցով ձգտում է ստեղծել կարգապահական և կառուցողական վերահսկողական միջավայր, որում բոլոր աշխատակիցները կհասկանան իրենց դերն ու պարտականությունները:

*Պարտքային ռիսկ*

Պարտքային ռիսկը այն ռիսկն է, որ Ընկերությունը ֆինանսական կորուստ կկրի, եթե պատվիրատուն կամ ֆինանսական գործիքի կոնտրագենտը չկատարի իր պայմանագրային պարտականությունները, և հիմնականում առաջանում է Ընկերության պատվիրատուներից ստացվելիք դեբիտորական պարտքերից:

Ընկերությունը չի ակնկալում, որ որևէ կոնտրագենտ չի կատարի իր պարտականությունները և վստահ է, որ ինքը ենթարկված չէ նշանակալի պարտքային ռիսկի:

Ընկերությունը իր ֆինանսական ակտիվների հետ կապված գրավ կամ այլ ապահովություն չի պահանջում:

**Պարտքային ռիսկին ենթարկվածությունը**

Ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքը ներկայացնում է պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը:

| **հազ. դրամ** | **31.12.2021 թ** | **31.12.2020 թ** |
|---|---|---|
| Դեբիտորական պարտքեր վաճառքների, այլ եկամուտների և տրված կանխավ. գծով | 228,193 | 259,378 |
| Դրամական միջոցներ | 57,145 | 106,179 |
| Այլ ֆինանսական ակտիվներ | 3,529 | 132 |
| **Ընդամենը** | **288,867** | **365,689** |

*b. Իրացվելիության ռիսկ*

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Ընկերությունը դժվարություններ կունենա այն ֆինանսական պարտավորությունների հետ կապված իր պարտականությունները կատարելիս, որոնք մարվելու են դրամական միջոց կամ այլ ֆինանսական ակտիվ տրամադրելով: Իրացվելիության կառավարման հետ

կապված Ընկերության մոտեցումն է՝ որքան հնարավոր է, ունենալ բավարար իրացվելի միջոցներ իր ֆինանսական պարտավորությունները ժամանակին կատարելու համար՝ ինչպես նորմալ, այնպես էլ լարված պայմաններում, առանց իր համբավը ռիսկի ենթարկելու և առանց անընդունելի վնասներ կրելու: Իրացվելիության ռիսկի կառավարման նպատակով Ընկերությունը նաև սովորաբար օգտվում է օվերդրաֆտային հնարավորություններից:

*c. Շուկայական ռիսկ*

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ շուկայական գների փոփոխությունները, ինչպիսիք են արտարժույթի փոխարժեքները, տոկոսադրույքները, բաժնետոմսերի գները, կազդեն Ընկերության շահույթ կամ վնասի և ֆինանսական գործիքների արժեքների վրա: Շուկայական ռիսկի կառավարման նպատակն է շուկայական ռիսկին ենթարկվածությունը պահպանել ընդունելի սահմաններում՝ միաժամանակ օպտիմիզացնելով հատույցը: Ընկերությունը իր շուկայական ռիսկերը չի հեջավորում:

*i. Արժութային ռիսկ*

Ընկերությունը ենթարկված է արտարժութային ռիսկին արտարժույթային վարկերի և արտարժութային դրամական մնացորդների գծով:

**Արտարժութային ռիսկին ենթարկվածությունը**

Ընկերության ենթարկվածությունը արտարժութային ռիսկին ներկայացված է ստորև՝ ըստ պայմանական (անվանական) գումարների:

| հազ. դրամ | Արտարժույթ արտահայտված 31.12.2021թ | Արտարժույթ արտահայտված 31.12.2020թ |
|---|---|---|
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 57,145 | 106,179 |
| Կարճաժամկետ փոխառություններ | 24,312 | 24,312 |
| **Զուտ ենթարկվածություն** | **81,457** | **130,491** |

Տարվա ընթացքում կիրառված միջին փոխարժեքներ:

| Դրամով | Միջին փոխարժեքներ | | Հաշվետու ամսաթվի փոխարժեք | |
|---|---|---|---|---|
| | 2021 12 ամիս | 2020 12 ամիս | 31.12.2021թ | 31.12.2020թ |
| 1 Դոլար | 503.81 | 489.20 | 480.14 | 522.59 |

*ii. Տոկոսադրույքային ռիսկ*

Տոկոսադրույքների փոփոխություններն ազդում են ուղղակիորեն փոխառությունների և փոխատվությունների վրա՝ փոփոխելով դրանց իրական արժեքը (ֆիքսված տոկոսադրույքով գործիք) կամ դրանց ապագա դրամական հոսքերը (փոփոխական տոկոսադրույքով գործիք): Ղեկավարությունը չունի ֆորմալ քաղաքականություն՝ որոշելու, թե ընկերությունը ինչքանով պետք է ենթարկված լինի փոփոխական, և ինչքանով ֆիքսված դրույքներին: Այնուամենայնիվ, նոր փոխառությունների ձեռք բերման կամ տրամադրման դեպքում ղեկավարությունը օգտագործում է իր դատողությունը, որպեսզի որոշի, թե մինչև մարումն ընկած ակնկալվող ժամկետում Ընկերության համար ո՞րը կլինի առավել նպաստավոր՝ փոփոխական, թե ֆիքսված տոկոսադրույքը:

*d. Իրական արժեքներ և հաշվեկշռային արժեքներ*

Բոլոր ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գնահատված իրական արժեքները հաշվարկվում են՝ դրամական հոսքերի զեղչման մեթոդով՝ հիմք ընդունելով գնահատված ապագա դրամական հոսքերը և նմանատիպ գործիքների համար զեղչման դրույքները հաշվետու ամսաթվի դրությամբ:

Ղեկավարության կարծիքով ընկերության ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքները մոտավորապես հավասար են դրանց հաշվեկշռային արժեքներին:

Իրական արժեքների գնահատման նպատակն է ստանալ մոտավոր այն գումարը, որով ֆինանսական գործիքը կարող է փոխանակվել իրազեկ և պատրաստակամ և անկախ կողմերի միջև գործարքում: Այնուամենայնիվ, հաշվի առնելով անորոշությունները և սուբյեկտիվ դատողությունների օգտագործումը, իրական արժեքը չպետք է մեկնաբանվի որպես մի գումար, որը հնարավոր կլինի ստանալ ակտիվների անհապաղ վաճառքից կամ պարտավորությունների մարումից:

**31. Պայմանական դեպքեր**

***Ապահովագրություն***

Ապահովագրությունը ՀՀ-ում համեմատաբար նոր է և դեռ զարգացման փուլում է գտնվում, և ապահովագրության շատ ձևեր դեռ հասանելի չեն: Ընկերությունը ամբողջովին ապահովագրված չէ իր գործունեության ընդհատման կամ էական կրճատման, երրորդ անձանց հանդեպ հնարավոր պարտավորությունների գծով՝ կապված գույքային, բնապահպանական կամ առողջական վնասների հետ հնարավոր միջադեպերի արդյունքում: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ապահովագրական պաշտպանություն ձեռք չի բերել, առկա է ռիսկ, որ որոշ ակտիվների վնասումը կամ պարտավորությունների առաջացումը կարող է էական բացասական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

***Հարկային անորոշություններ***

Հարկային համակարգը ՀՀ-ում նույնպես համեմատաբար նոր է և աչքի է ընկնում օրենսդրական հաճախակի փոփոխություններով, պաշտոնական պարզաբանումներով, որոնք երբեմն անհստակ են, հակասական կամ տարընթերցումների տեղիք տվող: Հարկային մարմինները կարող են ստուգել Ընկերության հարկային հաշվարկներն ու հայտարարագրերը և իրավունք ունեն տույժ-տուգանքներ նշանակելու:

Նշված հանգամանքները կարող են առաջացնել նշանակալի հարկային ռիսկեր: Ընկերության ղեկավարությունը վստահ է, որ իր հարկային պարտավորությունները հաշվարկել է պատշաճ կերպով՝ հիմնվելով ՀՀ հարկային օրենսդրության, հարկային հարաբերություններ կարգավորող այլ իրավական ակտերի՝ իր մեկնաբանության վրա:

**32. Հաշվետու ամսաթվից հետո տեղի ունեցած դեպքերի բացահայտումներ**

Հաշվետու ամաթվից հետո, բայց մինչև հաշվետվությունների վավերացումը 2022թ.-ի փետրվարի 24-ին սկսվեց ռուս-ուկրաինական ռազմական հակամարտությունը և այն անմիջապես ուղեկցվեց Ռուսաստանի Դաշնության նկատմամբ միջազգային պատժամիջոցներով:

Սա նշանակալիորեն ազդեց նաև Հայաստանի Հանրապետության տնտեսական միջավայրի վրա, մասնավորապես անկայունացան արտարժույթների փոխարժեքները, էներգակիրների միջազգային գները: Զգալիորեն սահմանափակվել են Հայաստանից դեպի Ռուսաստան, Ուկրաինա և Բելոռուս արտահանումները, ինչպես նաև այդ երկրներից դեպի Հայաստան ներմուծումները:

Կազմակերպությունն ունի առևտրային գործընկեր Ռուսաստանի Դաշնությունում, և նրա հետ գործարքները նշանակալի են: Հակամարտությունն ընդհանուր առմամբ կունենա էական ազդեցություն կազմակերպության գործառնությունների վրա, որի գծով ղեկավարությունը հաշվետվությունների վավերացման պահին չի կարող իրականացնել արժանահավատ քանակական գնահատումներ: